

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի
ՆՀ-62 ՀՐԱՄԱՆԱԳԻՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝ *որոշում եմ*.

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2008 թվականի մայիսի 14-ի «Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը սահմանելու մասին» ՆՀ-62 հրամանագիրը:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի ՆՀ-62 ՀՐԱՄԱՆԱԳԻՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.	<p>Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը</p>
	<p>Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով սահմանված կարգի համաձայն՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու դեպքերում օրենսդրությամբ նախատեսված հանգամանքների վերաբերյալ եզրակացություն էր տալիս նշված հարցերով գործող անկախ հանձնաժողովը, որի կազմավորման և գործունեության կարգը սահմանված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2008 թվականի մայիսի 14-ի ՆՀ-62 հրամանագրով: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործողության մեջ դրված Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2018 թվականի մայիսի 23-ին ընդունված օրենքով փոփոխություններ են կատարվել, համաձայն որոնց անկախ հանձնաժողովի նշված լիազորությունները վերապահվել են քրեակատարողական ծառայությանը և պրոբացիայի ծառայությանը: Նշված նոր կարգավորումներով պայմանավորված՝ արդեն իսկ համապատասխան փոփոխություններ են նախատեսվել ԼՂՀ քրեական և ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքերում:</p>
2.	<p>Առաջարկվող կարգավորման բնույթը</p>
	<p>Ներկայացված նախագծով առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2008 թվականի մայիսի 14-ի ՆՀ-62 հրամանագիրը, որը սահմանում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը, ինչպես նաև անհատական կազմը:</p>
3.	<p>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք</p>
	<p>Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման բաժնի կողմից:</p>

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ